ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ
09 ՄԱՐՏ 2021 N 24-Ա
ԼՈՒՍԻԿ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՀԵՏ ԿՆՔԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 188-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության «Հանրակրթության մասին» օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասով, 16-րդ հոդվածի 1.5-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 4-ի N319-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով «ՀՀ Վայոց ձորի մարզի Ջերմուկի Մ.Գորկու անվ. N 1 հիմնական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության գործադիր տնօրենի հետ կնքված 2016 թվականի մարտի 10-ի N293 աշխատանքային պայմանագրի 7-րդ բաժնի 7.1 կետը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. 2021 թվականի մարտի 10 -ից «ՀՀ Վայոց ձորի մարզի Ջերմուկի Մ.Գորկու անվ. N 1 հիմնական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության գործադիր տնօրեն Լուսիկ Սարգսյանին ազատել զբաղեցրած պաշտոնից, լուծել նրա հետ կնքած 2016 թվականի մարտի 10-ի N329 աշխատանքային պայմանագիրը:

2. «ՀՀ Վայոց ձորի մարզի Ջերմուկի Մ.Գորկու անվ. N1 հիմնական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության գործադիր տնօրենի պարտականությունների կատարումը դնել նույն դպրոցի ուսումնական գծով փոխտնօրեն Արևհատ Գրիգորի Քոլյանի վրա:

3. Հաշվապահին՝ վճարումը կատարել օրենսդրությամբ սահմանված կարգով:
4. ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի, ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչություններին՝ օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպել հանձնման- ընդունման աշխատանքները :

3/9/2021

X

ԱՐԱՐԱՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Подписано: GRIGORYAN ARARAT 1310850550 Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ